EVOCABANK-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1 **Կազմակերպիչ կամ Բանկ՝** «Էվոկաբանկ» ԲԲԸ

1.2 **Խաղարկություն՝** գովազդային վիճակախաղ, որտեղ պատահականության սկզբունքով ընտրվելու են շահող մասնակիցներ

1.3 **Մրցանակ՝** այն շահումը, որը տրամադրվելու է մասնակցին

1.4 **Մասնակից՝** այն հաճախորդը, ով բավարարում է սույն պայմաններով սահմանված բոլոր պայմաններին

1.5 **Կանոններ՝** Բանկի կողմից նշված պայմաններ

1.6 **Անկանխիկ վճարում** Վճարային քարտի միջոցով անկանխիկ եղանակով կատարված վճարում

1.7 **Ժամկետ՝** 01.04.25 (Երևանի ժամանակով ժամը 00:00-ից) մինչև 31.10.25թթ. (Երևանի ժամանակով ժամը 23:59-ը) ընկած ժամանակահատված

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Խաղարկությունը կազմակերպվում է «Էվոկաբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ կամ կազմակերպություն) կողմից:

2.2 Խաղարկությանը մասնակցելու դեպքում՝ մասնակիցը ընդունում է սույն պայմանները և կանոնները:

3. Խաղարկության պայմաններ

3.1. Այն հաճախորդները, ովքեր Ժամկետի ընթացքում կկատարեն 1 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի անկանխիկ վճարում Բանկի կողմից թողարկված Mastercard քարտերով, կմասնակցեն խաղարկությանը, որտեղ գլխավոր մրցանակը կլինի IM LS6 RWD (2024թ.,

սև մետալիկ, VIN CODE LSJWR4099RS049865) մակնիշի ավտոմեքենան:
Կլինեն նաև հետևյալ մրցանակները՝

- iPhone 16 Pro Max՝ 5 հատ
- Airpods Max՝ 5 հատ
- Mastercard Digital Gift Card 50,000 ՀՀ դրամ արժեքով՝ 10 հատ

4. Խաղարկությանը մասնակցելու պայմաններ

4.1 Խաղարկությանը մասնակցելու համար՝ անհրաժեշտ է նշված ժամկետի ընթացքում կատարել 1 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի անկանխիկ վճարում:
4.2 Անկանխիկ վճարում են համարվում անկանխիկ բոլոր գնումները՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- Կոմունալ վճարումներ
- Քարտից քարտ փոխանցումներ
- Սեփական հաշիվների միջև փոխանցումներ
- Խաղային վճարումներ, այդ թվում օնլայն խաղատներ (բեթթինգ/գեմբլինգ)
- Համալրում էլեկտրոնային դրամապանակներին
- Փոխանցումներ ՀՀ Պետբյուջե
- SWIFT փոխանցումներ
- Փոխանցումներ դեպի էլեկտրոնային փողի համակարգեր (Yandex Money, emoney, UPay և այլն)
- Վարկերի վճարումներ, ավանդի համալրում, ֆինանսական այլ գործառույթների իրականացում

5. Մրցանակներ

5.1 Մրցանակները կհայտարարվեն հաջորդաբար՝

- Առաջին հերթին կխաղարկվի սույն Պայմաններով նշված ավտոմեքենան,

- Այնուհետև 5 հատ iPhone 16 pro max և 5 հատ Airpods Max,
- վերջում կհայտարարվեն՝ 10 հատ 50,000 ՀՀ դրամ արժեքով Digital Gift Card-երի հաղթողները:

6. Խաղարկություն

6.1. Խաղարկությունը տեղի կունենա 2025թ. նոյեմբերի 29-ին:

6.2. Հաղթողները որոշվելու են պատահականության սկզբունքով

6.3. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերում Բանկի Facebook-յան պաշտոնական էջում, իսկ խաղարկության տեսաձայնագրությունը տեղադրվելու է Բանկի պաշտոնական YouTube-յան ալիքում:

6.4. Ժամկետի ընթացքում 1 մլն ՀՀ դրամ և ավել անկանխիկ գնում կատարած քարտերը խաղարկությանը մասնակցելու են քարտերի վերջին 6 թվի միջոցով:

6.5. Ուղիղ եթերի ժամանակ հայտարարվելու է Հաղթող մասնակցի քարտերի վերջին 6 թիվը:

6.6. Բանկը 72 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ փորձելու է կապ հաստատել հաղթող Մասնակցի հետ Բանկում Մասնակցի կողմից տրամադրած և ՀԾ Ավտոմատացված Բանկային Համակարգի (ՀԾ ԱԲՀ) Հաճախորդի թղթապանակում կցված հեռախոսահամարով:

6.7. Հաղթող մասնակիցը պարտավորվում է մրցանակը ստանալ 30 օրացուցային օրվա ընթացքում:

6.8. Այն դեպքերում, երբ Մասնակցի հետ կապի հաստատումը 72 ժամվա ընթացքում անհնար է կամ հաղթող Մասնակիցը 30 օրացուցային օրվա ընթացքում չի մոտենում մրցանակը ստանալու համար, տվյալ մրցանակի խաղարկությունը համարվում է չեղարկված:

7. Լրացուցիչ դրույթներ

7.1. Խաղարկության ժամանակ քարտը պետք է լինի գործող: Այն քարտերը, որոնց գործողությունը ավարտվում է մինչև Խաղարկության անցկացումը, պետք է լինեն վերաթողարկված:

7.2. Ժամկետի ընթացքում բացված քարտերը նույնպես կարող են մասնակցել խաղարկությանը:

7.3. Ամեն քարտ դիտարկվում է առանձին, իսկ հաճախորդի բոլոր քարտերով կատարված գործարքները չեն գումարվում իրար:

7.4. Կից քարտերը համարվում են առանձին քարտեր:

7.5. Մրցանակները տրամադրվելու են անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

7.6. Հաղթող Մասնակիցը նոտարով հաստատված լիազորագրով կարող է լիազորել այլ անձի՝ մրցանակն իր անունից ստանալու համար:

7.7. Մրցանակները դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրամադրվում:

7.8. Հաղթող մասնակիցը, սույն պայմաններին և կանոններին համապատասխան, տալիս է իր համաձայնուությունը լուսանկարահանվելու՝ Բանկի սոցիալական հարթակների էջերում հրապարակման համար: